



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՆՈՐԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1-ԻՆ, 3-ՐԴ, 10-ՐԴ ԵՎ 192-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԵՍՆԱԵՎ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Նորա Կիրակոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 3-րդ, 10-րդ և 192-րդ հոդվածների՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում առկա օրենսդրական բացի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. 2023 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Նորա Կիրակոսյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...) որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 3-րդ, 10-րդ և 192-րդ հոդվածներին իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 79-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը.

(...) ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի բացի ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/5793/05/22 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը փաստում է, որ իր համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել տվյալ գործով ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 1-ին, 3-րդ, 10-րդ և 192-րդ հոդվածներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի բացը, որոնք ուղղակիորեն հակասում են Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 79-րդ, 81-րդ հոդվածներին:

Դիմողը նշում է, որ խնդրո առարկա իրավադրույթի կիրառման արդյունքում փաստացի ստեղծվել է մի իրավիճակ, որում իր նկատմամբ կիրառվում է հանրային իշխանական լիազորություն՝ հանրային շահի իրացման կապակցությամբ և դրա վկայակոչմամբ:

Դիմողն ընդգծում է, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներով ինքը զրկված է իր վերաբերյալ հանրային շահի ոլորտում և դրա սպասարկման անվան տակ պետաիշխանական լիազորություններով օժտված մարմնի կողմից կայացվող որոշումների իրավաչափության վիճարկման հնարավորությունից և ունի միայն մեկ ընտրություն՝ ընդունելու կամ չընդունելու այդ մարմնի հայեցողությամբ ընտրված գնահատման մեթոդի արդյունքում որոշված գումարը:

Ըստ Դիմողի՝ այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ իր կողմից բարձրացված հարցով արդարադատության իրականացումն ընդդատյա է քաղաքացիական դատարանին, որի շրջանակներում կիրառվող օրենսդրության համաձայն՝ պետաիշխանական լիազորություններ կրող և դրանք կիրառող սուբյեկտը չի կրում իր որոշումներն ու գործողությունները, ինչպես նաև անգործությունը և դրա իրավաչափությունն ու համաչափությունը հիմնավորելու պարտականություն, և այդ ողջ բեռը դրվում է իր վրա այն պարագայում, երբ ինքն ունի սահմանափակված իրավունքներ և ենթարկվում է պետաիշխանական հարկադրանքի ազդեցության, հակասում է Սահմանադրությանը:

Դիմողը նշում է. «Վիճարկվող նորմերի Դատարանի կողմից կիրառված մեկնաբանության արդյունքում Դիմողի վեճի ծավալը ենթարկվում է այնպիսի փոփոխության, որի հետևանքով վերջինս կարող է վիճարկել Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման

գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից ընտրված գնահատման մեթոդի արդյունքը և չունի հնարավորություն ընդհանուր իրավասության դատարանում քննարկման առարկա դարձնել այդ որոշման իրավաչափությունը: Այսպիսի մեկնաբանության հետևանքով խախտվում են Սահմանադրության 10-րդ, 60-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված իրավունքները (...):»:

Ըստ Դիմողի՝ խնդրո առարկա օրենսդրական կարգավորումները կամ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը հակասում է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածին այնքանով, որքանով չի երաշխավորում հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն Սահմանադրությամբ սահմանված սկզբունքներն ու իրավունքները:

Դիմողը փաստում է, որ իր նկատմամբ կիրառված նորմերին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում սահմանափակվում են իր սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավունքը և, այդ կապակցությամբ՝ արդար դատաքննության իրավունքը, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում, եթե **դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպ-

քերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Թվարկված հիմքերից որևէ մեկի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված դրույթների, ինչպես նաև Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունը վկայում է, որ՝ «(...) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղա-

քացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավագործությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում: (...) Սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավագործությամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում» (ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշում, 17.03.2009 թ.):

Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ուղղված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է կամ առկա է եղել որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով սույն դիմումին կից ներկայացված փաստաթղթերը և «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունները, արձանագրում է, որ թիվ ՎԴ/5793/05/22 գործով Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի դեմ Նորա Կիրակոսյանի կողմից ներկայացված հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2022թ. որոշման համաձայն՝ Նորա Կիրակոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ գրություն-ծանուցում-

ները և պայմանագրերի նախագծերը, ինչպես նաև այդ ծանուցումն իրականացնելուն ուղղված պատասխանողների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ, և գործի քննությունը գտնվում է նախնական դատական նիստերի անցկացման փուլում:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին և Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտն առկա չէ, Դիմողը չի պահպանել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու՝ անհատական դիմումին ուղղված սահմանադրական պահանջը**, ինչը, Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատական դիմումով գործի քննությունը մերժելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Նորա Կիրակոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 3-րդ, 10-րդ և 192-րդ հոդվածների՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում առկա օրենսդրական բացի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 ապրիլի 2023 թվականի
ՍԴԱՈ-38